

ԿՐԿՆԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՏԵՔՍԱԿԱԶՄԻՉ ԴԵՐԸ ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ «ՌԵՀԱՆ» ՆՈՐԱՎԵՊՈՒՄ

ԿԱՐԻՆԵ ԱՍԱՏՐՅԱՆ
բանասիր. գիտ. թեկնածու
«Քվանտ» վարժարան
asatryan.karine.m@gmail.com

ՀՏԴ՝ 82-32; 801.7
DOI:10.54503/1829-4278.2023.2-142

Անփոփագիր

Տեքստի կապակցվածությունն ու կառուցվածքային ամբողջացումը՝ որպես տեքստի կարևորագույն հատկանիշներ, պայմանավորվում են լեզվական տարատեսակ գործառույթներով: Տեքստային միավորների միասնացման համար կարևոր միջոց է կրկնանվանումը: Կրկնանվանումը (повторная номинация) լեզվական տարբեր միջոցներով տեքստում արդեն նշանակված նույն օբյեկտի կամ սուբյեկտի անվանումն է: Կրկնանվանումները մասնակցում են տեքստային միավորների կապակցմանը, տեքստի՝ որպես կապակցված խոսքի կառուցվածքային, իմաստային ու հաղորդակցական որակապես նոր միավորի ձևավորմանը: Իմաստաբանական և շարահյուսական տեսանկյունից կրկնանվանումները տեքստում իրենց կապակցական գործառույթն իրացնում են տարբեր դիրքերում՝ գործածվելով կից կամ միմյանցից հեռու: Գեղարվեստական տեքստերում դրանց դերն էական է նաև ոճական առումով:

Բանալի բառեր. Ռեհան, կրկնանվանում, կապակցվածություն, տեքստակազմիչ դեր, կրկնանվանումների շղթա

Տեքստի բառաքերականական կապակցվածությանը (կոհեզիա), իմաստային ու կառուցվածքային ամբողջականությանը (կոհերենտություն) նվիրված տասնյակ ուսումնասիրություններում բազմիցս ներ-

կայացվել է այն տեսակետը, ըստ որի՝ տեքստային միավորների կապակցվածությունը տեքստի գծային, հորիզոնական ծավալումն է, իսկ տարբեր հատվածների միասնացումը՝ ինտեգրացիան (Գալպերին Ի. Ռ.), տրամաբանական-բովանդակային ամբողջացումը, տեքստի խորքային, ուղղահայաց զարգացումը: «Կոհեզիան իմաստաբանական հարաբերություն է: Բայց ինչպես իմաստաբանական համակարգի բոլոր բաղադրիչները, այն իրացվում է բառաբերականական համակարգի միջոցով», «<...> վերաբերում է նրան, թե ինչպես է տեքստը ձևավորվում որպես իմաստաբանական կառուցվածք»¹: Կոհերենտությունը միայն իմաստային երևույթ չէ: Այն միաժամանակ դրսևորվում է կառուցվածքային, իմաստային և հաղորդակցական ամբողջականությամբ, որոնք հարաբերվում են, ինչպես ձևը, բովանդակությունը և գործառնությունը²: Որքան էլ նախադասությունը ինքնուրույնություն դրսևորի որպես շարահյուսական ավարտուն միավոր, «լիարժեք իմաստ է ստանում համատեքստում»³: Առանձին նախադասությունների, ապա և տեքստային միավորների միջև իմաստակառուցվածքային կապի, հաջորդականության ու տրամաբանական միասնացման համար էական դեր ունեն հատկապես կրկնությունները: Օ. Լ. Կամենսկայայի բնորոշմամբ՝ տեքստում յուրաքանչյուր նախադասություն պետք է «կապված» լինի C-մոդելի⁴ որոշակի բաղկացմասի կամ հատվածի հետ: Հաջորդական նախադասությունը կառուցելիս ներառվում են ոչ միայն այդ բաղադրամասի հիմնական տարբերակիչ հատկանիշները նշանակող, այլև C-մոդելի խոսքավորվող բաղկացուցչի մասին նոր տեղեկություն փոխանցող բառեր: Նախադասության մեջ կրկնվում են այդ բաղադրամասը բնութագրող բառերը կամ դրանց իմաստային համարժեքները

1 Halliday M. A. K., Hasan R., *Cohesion in English*, London-New York, Longman Group Ltd, 1976, p. 6, 26.

2 Москальская О. И., *Грамматика текста*, Москва, «Высшая школа», 1981, с. 17.

3 Бахтин М. М., *Эстетика словесного творчества*, Москва, «Искусство», 1986, с.276.

4 C-մոդելը անձի գիտակցության մեջ գոյություն ունեցող ստաժողական կառուցվածք է: Դրա բաղադրիչները արտաքին աշխարհի առարկաների, երևույթների և դրանց հարաբերությունների վերաբերյալ պատկերացումներն ու հասկացություններն են < >: Տե՛ս Каменская О. Л., *Текст и коммуникация*, Москва, «Высшая школа», 1990, с. 23.

այլ բառերով⁵: Իմաստով և կառուցվածքով սերտորեն փոխկապակցված առանձին նախադասություններ կազմում են շարահյուսական բարդ ամբողջություններ՝ միկրոտեքստեր (Մոսկալսկայա Օ. Ի.): Միկրոտեքստերի կառուցվածքային հիմնական հատկանիշները բնորոշ են նաև ամբողջ տեքստին՝ իբրև կառուցվածքային, իմաստային և հաղորդակցական միավոր: Խոսելով պարբերության մասին՝ Ե.Վ. Պադուչևան նշում է, որ <...> պարբերության մեջ տեքստի կապակցվածությունը մեծ մասամբ հենվում է կից նախադասություններում իմաստաբանական միանման տարրերի կրկնության վրա»⁶: Նմանատիպ կարծիք է հայտնում նաև Յու. Լոտմանը՝ բնորոշելով, որ «տեքստի կապակցվածությունը ձևավորվում է հաջորդաբար դասավորված նախադասությունների կառույցում որոշ տարրերի կրկնությամբ»⁷:

Տեքստակառուցումը լեզվի կարևոր գործառնություններից է: Շատ լեզվաբաններ (Վ. Մատեզիուս, Յան Ֆիրբաս, Ֆ. Դանեշ, Մ. Ա. Կ. Հալիդեյ) այս հարցը քննել են տարբեր տեսանկյուններից՝ թե՛ մառնմատիկ հարաբերությունների, որոնք ապահովում են նախադասության թեմատիկ զարգացումը, թե՛ լեզվական հաղորդակցության, որը Յան Ֆիրբասի բնորոշմամբ հարաշարժ (դինամիկ) գործընթաց է: Կարևոր է, թե տեղեկույթի որոշակի քանակ, իմաստային ծավալ կրող լեզվական բաղադրիչը ինչ չափով է մասնակցում և խթանում հաղորդակցության հետագա զարգացումը: Նախադասության բաղադրամասերի միջև հաղորդակցական ակտիվության աստիճանների բաշխումը, Ֆիրբասի խոսքով, արդյունք է երեք գործոնների փոխազդեցության՝ համատեքստի, իմաստաբանական կառուցվածքի և գծային դասավորության⁸: Ըստ Ֆ. Դանեշի՝ տեքստի կապակցվածությունը բնութագրվում է թեմատիկ զարգացմամբ (thematic progression), որը, ըստ էության, կարող է դիտարկվել որպես բովանդակության հիմնականախթ⁹:

5 Каменская О. Л., *Текст и коммуникация...*, с. 56.

6 Падучева Е. М., О структуре абзаца, *Труды по знаковым системам*, II, Тарту, 1965, с. 285.

7 Лотман Ю. М., *Внутри мыслящих миров. Человек – текст – семиосфера – история*, Москва, «Языки русской культуры», 1996, с. 309.

8 Firbas J., On the Concept of Communicative Dynamism in the Theory of Functional Sentence Perspective, *Sbornik prac' Filosoficke fakulty brnenske university, Řada jazykovědná*, vol. 20, iss. A19, 1971, p. 136, 138 .

9 Daneš F., Functional Sentence Perspective and the Organization of the Text, *Papers*

Խոսքային իրադրության մեջ նախադասությունը հաղորդակցական միավոր է, և դրա բաղադրամասերի տեղեկատվական ծավալը պայմանավորվում է լեզվական միավորների համատեքստային հարաբերություններով: Կապող լեզվական միջոցներ են ոչ միայն բառակրկրությունները, փոխարինող դերանուններն ու հոմանիշ բառերը մտքի ընդհանուր բաղադրիչը կարող է նաև ենթադրվել՝ արտաքուստ չարտահայտվելով: Ի. Բելերտի կարծիքով նույնպես կրկնությունը տեքստի կապակցվածության անհրաժեշտ պայման է նա կարևորում է հատկապես լեզվական ցուցիչների (ինդեքսներ)¹⁰ դերը:

Տեքստում նախադասության որոշ անդամներ, արդեն ներկայացված կամ նշված լինելով, հաջորդիվ կարող են կրկնվել, բազմաբնորոշվել լեզվական տարբեր ցուցիչներով՝ համատեքստային հոմանիշ բառեր, բառակապակցություններ, անգամ նախադասություններ, փոխարինվել դերանուններով՝ միաժամանակ հղելով միևնույն առարկային, անձին, երևույթին կամ իրադրությանը:

1) Կրկնանվանումը՝ որպես լեզվական երևույթ

Տեքստի իզոտոպիկ բնույթը¹¹, ըստ էության, արդյունք է նաև կրկնվող լեզվական միավորների միջև իմաստային կապի, որը հանգեցնում է նաև տեքստային բոլոր հատվածների բովանդակային միավորմանն ու ամբողջացմանը:

Տեքստի բաղկացմասերի քերականական և իմաստային կապակցման կարևորագույն միջոց է կրկնանվանումը¹²: Կրկնանվանու-

on functional sentence perspective (Janua Linguarum. Series Minor), vol., 147, p. 114.

10 Ըստ Ի. Բելերտի՝ լեզվական ցուցիչներ են հատուկ անունները, անձնական, ցուցական, հարաբերական դերանունները, որոշ մակբայներ, գոյականներ <...>: «Լեզվական ցուցիչները կա՛մ անմիջականորեն ցույց են տալիս արտալեզվական օբյեկտները, կա՛մ հղում են նախորդող համատեքստում գործածված որոշ այլ ցուցիչների և վերջիններիս շնորհիվ կատարում են արտալեզվական օբյեկտները մատնանշելու իրենց գործառնությունը: Տե՛ս **Беллерт И.**, Об одном условии связности текста, *Новое в зарубежной лингвистике*, вып. VIII (Лингвистика текста), Москва, «Прогресс», 1978, с. 185–186.

11 Դիսկուրսի իզոտոպիկ բնույթի մասին տե՛ս **Греймас А.-Ж.**, *Структурная семантика. Поиск метода*, Москва, «Академический проект», 2004, с. 99–146.

12 Կրկնանվանումների տեքստակազմական գործառնության մասին խոսելիս Ն.Ս. Վալզինան առանձնացնում է դերանուններն ու մակբայները, փոխաբերաբար գործածված գոյականները, ցուցական նշանակության բառերն ու

մը «<...> տվյալ համատեքստում արդեն նախապես նշանակված դենոտատի»¹³ անձի, առարկայի, գործողության, հատկության անվանումն է <...>»¹⁴։ Իսկ ինչպես են միևնույն օբյեկտը նորից անվանելիս տարբեր անունների միջև իմաստային համարժեք հարաբերություններ հաստատվում։ Ըստ Վ. Գալի՝ Գ. Ֆրեգեն անվան իմաստաբանական կառույցում տարբերակում է նշանակությունը՝ նշանակվող առարկայի նկատմամբ հարաբերությունը, և իմաստը՝ անվան մեջ բովանդակված տեղեկությամբ։ Անունների նույնականությունը որոշվում է նշանակության մակարդակում, իսկ դրանց տարբերությունները՝ իմաստի։ Վերջիններս սահմանվում են այն տարբեր հատկանիշներով, որոնք առանձնացվում են խոսողի կողմից առարկան անվանելիս¹⁵։ Միևնույն օբյեկտն անվանող տարբեր հասկացությունները կարող են ունենալ տարբեր ծավալ, և դրա ձևավորումը, ըստ Վ. Գալի, կախված է օբյեկտում առանձնացվող հատկանիշներից։ Կրկնանվանումներով տեքստում սահմանվում են ոչ միայն լեզվական միավորների քերականական հաջորդականությունը, այլև դրանց բովանդակային կապը։

Արդեն նշանակված առարկան կամ երևույթը կարող է կրկնանվանվել բառաքերականական, շարահյուսական տարբեր ձևափոխություններով, փոխաբերական միջոցներով։ Իմաստաբանական հարաբերության տեսանկյունից կրկնանվանումը հնարավորություն է տալիս առավելագույնս տարատեսակելու անվանելու միջոցը՝ օգտագործելով անուղղակի անվանման բոլոր տեսակները՝ վերացական, դերանվա-

կապակցությունները, շրջասույթները (տե՛ս **Валгина Н. С.**, *Теория текста*, Москва, «Логос», 2003, с. 35). Կրկնանվանումների գործածության ժամանակ որպես փոփոխական միջոցներ առանձնացվում են հոմանիշները, փոխանունները, փոխաբերությունները, հիպերոնիմը <...> (տե՛ս **Фомина Г. А.**, *Стилистический аспект референции. Текст и его компоненты как объект комплексного анализа*, Ленинград, 1986, с.110)։

13 Նշյալ առարկան՝ որպես նշանակման օբյեկտ (տե՛ս **Հայրապետյան Ա.Պ.**, *Օտար բառերի բառարան*, Երևան, Հեղ. հրատ., 2011, էջ 143)։ Մեզ շրջապատող իրականության առարկան կամ երևույթը, որոնց հարաբերակցվում է տվյալ լեզվական միավորը (տե՛ս **Розенталь Д. Э.**, **Теленкова М. А.**, *Словарь-справочник лингвистических терминов*, Москва, 1985, с. 66)։

14 **Гак В. Г.**, *Языковые преобразования*, Москва, Школа «Языки русской культуры», 1998, с. 524.

15 *Языковая номинация. Общие вопросы* (отв. ред. Б.А. Серебренникова), Москва, «Наука», 1977, с. 238.

նական, փոխաբերական, արտահայտչական¹⁶: Լեզվական միջոցները, որոնցով արտահայտվում են կրկնանվանումները, բազմազան են: Անմիջականորեն մասնակցելով տեքստային տվյալ հատվածի և/կամ ամբողջ տեքստի թեմատեմատիկ շղթայի կառուցմանը՝ կրկնանվանումը «սովորաբար կազմում է խոսույթի ռեման»¹⁷: Գեղարվեստական տեքստում կրկնանվանումները ձևավորում են «նույն անձին կամ առարկային վերաբերող անվանումների կրկնությունների շղթաներ»¹⁸: «Անվանողական միավորը կարող է կազմվել մեկ կամ մի քանի բառերից, կարող է լինել նախադասության մաս և անզաման ամբողջական նախադասություն»¹⁹:

Գեղարվեստական տեքստում պատումի թեմատիկ զարգացմանը զուգընթաց, տարատեսակելով արդեն նշանակված անձը կամ առարկան, երևույթը, դրանց բնորոշ հատկանշային որակները, իրադրությունը կամ հոգեվիճակը նորից անվանելու բառաբերականական ու լեզվառձական միջոցները, գրողը ընդհանրացնում կամ կոնկրետացնում է ասելիքը, խիստ ընդգծված հուզականություն կամ չեզոք վերաբերմունք է արտահայտում դրա նկատմամբ: Կրկնանվանումները միա-

16 Языковая номинация..., с. 287–288.

17 Гак В. Г., Языковые преобразования..., с. 539.

18 Тамарченко Н. Д., Поэтика: словарь актуальных терминов и понятий, Москва, Издательство Кулагиной «Intrada», 2008, с. 147. Միևնույն օրյեկտի անվանումների հաջորդականությունը կազմում է անվանողական շղթա (տե՛ս **Фомина Г. А.**, *Стилистический аспект референции...*, с.111): Իմաստագրացման ընթացքում «անվանողական շղթայի բաղադրիչների իմաստները մեկուսացած չեն, այլ տեքստային տարածության մեջ ձևավորվող իմաստային կառույցի մի մասն են: Նշանագիտական տեսանկյունից կարևորվում է նաև անվանողական շղթայում բառերի իմաստաբանական ձևափոխությունների վրա համատեքստի ազդեցության վերլուծությունը (տե՛ս **Декатова К. И.**, *Смыслообразование знаков косвенно–производной номинации русского языка: когнитивно–семиологический аспект исследования*, Автореферат диссертации, Волгоград, 2009; **Курдыбайло М. А.**, *Смыслообразование компонентов повторной номинации в художественных текстах Т. Н. Толстой*, Диссертация кандидата наук, Волгоград, 2015; **Декатова К. И.**, **Курдыбайло М. А.**, *Семиологический подход к анализу смысловой организации повторной номинации*, *Lingua Mobilis*, 4,(50), 2014, с. 22, 24).

19 **Палек В.**, Кросс–референция: К вопросу о гиперсинтаксисе, *Новое в зарубежной лингвистике*, вып. VIII, Москва, «Прогресс», 1978, с. 245–246.

վորում են տեքստի առանձին հատվածների թեմատիկ ուղղությունները, հավելյալ իմաստային և պատկերավորության խորքային ծավալ են փոխանցում, ամբողջացնում են ստեղծագործության բովանդակային միասնությունը, համալրում ոճական-արտահայտչական հնարավորությունները: Ըստ Վ. Գալի՝ կարևորվում է օբյեկտն անվանողի անհատական, սուբյեկտիվ վերաբերմունքը: Առանձնահատուկ դեր ունեն նաև գրական ավանդույթը, ստեղծագործության ժանրային նախընտրությունը, գրողի գեղարվեստական աշխարհընկալման առանձնահատկությունները, խոսքակերտման վարպետությունը: Կրկնանվանումների միջոցով նույն առարկայի, երևույթի, իրադարձության (իրադրության) անվանումը տարակերպելով, տեքստի խոսքային միավորների միջև «հայտնաբերելով» «մտքի ընդհանուր բաղադրիչը»՝ գրողն ի վերջո ամբողջացնում է գրական ստեղծագործության թեմատիկ-բովանդակային կառույցը: Միևնույն օբյեկտի սկզբնական անվան և կրկնանվանման, ինչպես նաև կրկնանվանումների շղթաներ կազմող լեզվական միավորների միջև (արտահայտված լինեն դրանք դերանուններով, համարժեք և/կամ համատեքստային հոմանիշ բառերով ու բառակապակցություններով, նախադասություններով), երբ խոսքամտածողական գործընթացներում ընկալվում և նշանակվում են արտալեզվական իրողությունները, ձևավորվում են իմաստաբանական տարբեր հարաբերություններ: Հաշվի առնելով կրկնանվանումների միջև իմաստաբանական տարբեր փոխհարաբերությունները՝ տարբերակում են նույնարժեք և փոփոխակ կրկնանվանումներ: Պատումի ծավալմանը զուգընթաց կրկնանվանումներում, հատկապես դրանց շղթայական գործածության ժամանակ, ակտիվանում են բառերի «ընդհանուր» իմաստային բաղկացուցիչները, որոնց շնորհիվ բազմաբնորոշվում է արդեն անվանված օբյեկտը կամ սուբյեկտը: Եթե լեզվական միավորների միջև ռեֆերենցյալ հարաբերությունը նույնական է, կրկնանվանումը համարժեք է տեքստում արդեն նշված նույն օբյեկտին: Փոփոխակ կրկնանվանումները ձևավորվում են նույն օբյեկտին տարբեր անվանումներ տալով՝ մեծապես կախված նաև այն հանգամանքից, թե ինչ տեսանկյունից է դիտարկվում այն, ինչ հատկանիշ է կարևորվում: Կրկնանվանումները տեքստում արդեն նախանշված օբյեկտին հղում են ուղղակիորեն, այսինքն՝ լեզվական միավորը կրկնվում է նույնությամբ, կամ նորից անվանում են այն այլ բառով, բառակապակցությամբ, նա-

խաղասությամբ՝ հաշվի առնելով գործածության համատեքստային միջավայրը (հաճախ իմաստաբանական կերպափոխումները հասկանալի են դառնում հենց այդ համատեքստում): Յուրաքանչյուր հաջորդական կրկնանվանում ոչ միայն կրկնում, այլև համալրում, նոր հատկանիշներով է որակում արդեն ներկայացված առարկան: Կրկնանվանումները տեքստում գործածվում են կից կամ միմյանցից հեռու: Կրկնանվանումների միջոցով տեքստն ամբողջանում է որպես կառուցվածքային, իմաստային և հաղորդակցական միավոր: Ըստ Ռ. Բարտի՝ «նախադասությունը գտնվում է լեզվաբանության և անդրլեզվաբանության սահմանագծին <...>. նախադասությունից դուրս՝ կապակցված տեքստում, իմաստը անխուսափելիորեն ստանում է ռեֆերենցյալ բնույթ <...>, որոշվում այս կամ այն կոնկրետ իրադրությամբ...»²⁰:

2) Կրկնանվանումները Գրիգոր Զոհրապի «Ռեհան» նորավեպում

Կրկնանվանումների տեքստակազմիչ դերը դիտարկենք Գրիգոր Զոհրապի «Ռեհան» նորավեպում: Ուշադրություն դարձնենք նախ վերնագրին, որը ստեղծագործության մեկնաբանության «բանալին» է: Խոսելով բանաստեղծական վերնագրերի մասին՝ Ե. Վ. Ջանջաևյանն նշում է, որ «...ընթերցողը հակված է տեքստն ընկալելու ոչ թե որպես մեկուսացած երևույթ, այլ զուգորդաբար ծագող այլ տեքստերի հետ հարաբերակցությամբ»²¹: Գրիգոր Զոհրապի «Ռեհան» նովելի վերնագիրը նախ և առաջ պետք է հասկանալ մշակութաբանության համատեքստում²²:

20 **Барт Р.**, Лингвистика текста, *Новое в зарубежной лингвистике*, вып. VIII, Москва, «Прогресс», 1978, с. 444, 446.

21 **Джанджакова Е. В.**, *О поэтике заглавий*, Лингвистика и поэтика, Москва, «Наука», 1979, с. 208.

22 Ռեհանին վերաբերող ազգագրական-մշակութաբանական ընկալումներն ու մեկնաբանությունները հնագույն արմատներ ունեն: Տարբեր ազգերի ավանդություններում և ավանդույթներում, օրինակ՝ սլավոնական, եվրոպական, ռեհանի հետ կապված բազմաթիվ լեգենդներ են պահպանվել հարսանեկան սովորույթներում ռեհանով զարդարել են հարսանեկան ծառը, կա՝ նրբողները, գինու և ջրի տարաները, հագուստը, գլխանոցը, վարսերը: Բալկաններում ռեհանով զարդարվում էին նաև ծիսական արարողությանը (Ծաղկազարդ) մասնակից աղջիկները: Բուլղարիայում այն սիրո մոգականության խորհրդանիշ է եղել: Բուլղարները հավատում էին, որ հարսի և փեսայի ծաղկեփնջից ռեհան վերցնելով և դրա սերմերը իրենց այգում ցանելով՝ կարագացնեն խնամախոսների այցը: Սերբիայում պսակադրության ժամանակ հարսնացուն

Այս տեսանկյունից արդեն կանխատեսվում է վերնագրում «թաքնված» **ռեհանի փունջն իբրև աղջկա մազեր**²³ համեմատությունը, որը ծավալվում է աստիճանաբար՝ տեքստի ընթերցմանը զուգընթաց՝ պատուհանագոգին դրված ռեհանի մուգ կարմիր թաղարն իբրև արձակ մազերով աղջկա պատկերային ուղղակի զուգահեռով: Տեքստում վերնագրի տեղն ու դերը քննելով՝ Ի. Ա. Պուշկարյովան նշում է, որ տեքստի և վերնագրի կապն իրացվում է բառերի զուգորդական (ասոցիատիվ) շարքերով, որոնք արտացոլում են տեքստի ամբողջականությունը վերնագրի և տեքստի արտակա (էքսպլիցիտ) և ներակա (իմպլիցիտ) կապը ձևավորում է տրամաբանական հարաբերակցության չորս տիպ. դրանցից մեկը կրկնության տրամաբանական հարաբերակցությունն է²⁴, որը հաճախ արտահայտվում է տեքստում վերնագրի բառային, բառակապակցական նույն կամ փոփոխակ կրկնանվանումներով: Դրանց միջոցով բացահայտվում է ստեղծագործության վերնագրում սեղմված հիմնական (կոնցեպտուալ) միտքն ու բովանդակությունը: Նովելի վերնագիրը՝ իբրև ստեղծագործության «հիմնաթեմա», կրկնվում, զուգորդական կապերով ձևավորված պատկերային յուրօրինակ այլաբանությունով վերարծարծվում, տարաբաժանվում է ստեղծագործության հատվածներում ճյուղավորվում ենթաթեմաների, որոնցից արտածվում են վերնագրի իմաստային, նաև զգացմունքային շերտերը: Փոքր ծավալի ստեղծագործություններում (նովել, պատմվածք) գրողը, ներկայացնելով քիչ թվով հերոսների, առարկաներ, երևույթներ կամ իրադարձություններ, ստեղծագործական լայն հնարավորություն ունի պատկերավոր դիպուկ նկարագրություններով, գեղարվեստական տեղին բնորոշումներով տարանվանելու *նույն* հերոսին, իրականության նույն առարկան կամ երևույթը: Գործածվելով կոնկրետ համատեքստ

ռեհանը պահում էր ծոցում: Տղայի համակրանքը շահելու դեպքում աղջկան ռեհան նվիրելու կամ փեսացուին սպասող աղջկա կողմից ռեհան աճեցնելու մոտիվը պահպանվել է հարավային սլավոնների բանահյուսական երգերում (տե՛ս *Словянские древности. Этнолингвистический словарь* (под ред. Н. И. Толстого), т. 1, Москва, 1995, с. 131–133): Վարսերը ռեհանով զարդարելու սովորույթ է եղել նաև միջնադարյան Իտալիայում, որտեղ ամուսնանալ ցանկացող աղջիկները իրենց պատուհաններին նաև ռեհան էին դնում:

23 «Ռեհան»՝ նորավեպից բոլոր մեջբերումները՝ **Գրիգոր Զոհրապ, Երկերի ժողովածու**, 2 հատ., հ. 1, Երևան, «Հայպետհրատ», 1962:

24 **Пушкарёва И. А.**, О месте заглавия в текстовой парадигматике. На материале лирики Б. А. Ахмадулиной, *Вестник ТГПУ*, вып. III (47), 2005, с. 28–30.

տում՝ առարկան, երևույթը, իրադրությունն անվանող լեզվական միավորում ստեղծագործական գործընթացների ակտիվ ներգործությամբ իմաստային հնարավոր տեղաշարժեր են լինում, և գրողը իր առջև դրած գեղարվեստական խնդրի լուծմանը հասնելու համար ընթերցողին տեքստն ընկալելու, այն տարբեր տեսանկյուններից դիտարկելու և հետահայաց վերաիմաստավորելու հնարավորություն է ընձեռում: Ն. Արությունովայի կարծիքով՝ «միննույն կոնկրետ առարկան նշանակելու համար տարբեր անվանումների օգտագործման հնարավորությունը ստեղծում է իրավիճակներ, որոնք կարելի է անվանել տարանվանողական»²⁵: Ըստ նրա՝ տարանվանումները երբեմն լրացուցիչ տեղեկույթ են տալիս առարկայի մասին կամ գնահատում են այն: Տարանվանում առաջանում է, երբ հեղինակը տեքստ է ներմուծում առարկայի պատկերավոր, միջնորդավորված անվանումներ:

Գ. Զոհրապի նովելի վերնագիրը՝ «Ռեհան», ուղղակիորեն կրկնվում է երկու անգամ՝ **ռեհանի պզորիկ թումբ մը, ռեհանի պզորիկ փունջ**: Նովելում կարելի է առանձնացնել կրկնանվանումների շղթաներ՝

ա) **առատ մազեր – սև թումբ, այդ մազերը, մազերը թափած հիմա, սև մազերուն ժողվածքը, սև մազերու կոհակը, առաք գեղեցիկ մազեր,**

բ) **դեմք, սրտի մուր ու համակրելի պարկեր մը, երես, երագող ու մրամուր կերպարանք մը, նազելի գլուխ:**

Կրկնանվանումների շղթաներում ներառված բաղադրիչները իմաստաբանական փոխհարաբերության մեջ են ոչ միայն մեկ շղթայի կազմում, այլև միմյանց նկատմամբ: Համատեքստի անմիջական ներգործությամբ կրկնանվանումներում ակտիվանում են բառերի իմաստային բաղկացուցիչներ, որոնք նույն, նաև այլ կրկնանվանումների բաղադրիչ միավորների համար ընդհանուր են: Նովելի սկզբնամասում՝ էքսպոզիցիայում, գործածված է **առաք մազեր** բառակապակցությունը՝ որպես սկզբնանվանում: Մազ բառի փոխաբերական բաղկացուցիչը՝ «բույսերի մազնզուկ»²⁶, հնարավորություն է տալիս կառուցելու վերևում նշված մազ և ռեհան զուգահեռը: **Թումբ** և **փունջ** բառամիավորներից երկրորդում՝ **փունջ** բառում, «թաքնված» է մազ բառի իմաստային

25 Языковая номинация. Виды наименований..., с. 307.

26 Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976, էջ 951:

բաղկացուցիչներից մեկը՝ «մազափունջ»/«խոպոպ»²⁷ (նաև «մազերի խոպոպ, իրար հետ մի ամբողջություն կազմող մազեր»²⁸, «մարդու գլխի մազերի խոպոպ, մի որոշ քանակ միասին վերցրած»²⁹): **Թումբ** բառի փոխաբերական բաղկացուցիչը՝ **բլրաձև փոքր բարձունք**³⁰, ներառված է **մազ** բառի առաջին՝ **ժողովված սև թումբ**³¹, հետագայում նաև մյուս՝ **սև մազերուն ժողովվածքը, սև մազերու կոհակը** կրկնանվանումներում: **Կոհակ** բառում ներառված է **բլուր** կամ **բարձրություն** բաղկացուցիչը, որը նաև **թումբ** բառի բնորոշող իմաստային դաշտում է գործում: **Կոհակ** և **թումբ** բառերը վերաիմաստավորվում են: Վերորերյալ կրկնանվանումները խթանում են վերնագրի հետ հետահայաց (ռետրոսպեկտիվ) կապը և հնարավորություն տալիս **թումբ—ժողովվածք—կոհակ—փունջ**³² բառերը դիտարկելու իմաստային ընդհանուր հարաբերության մեջ: Շղթայի յուրաքանչյուր բաղադրիչ միավորներից արտածվում է «կրկնվող» իմաստային բաղկացուցիչը, ինչի շնորհիվ էլ բառերը կենտրոնանում են թեմատիկ միևնույն առանցքի շուրջ: Կամ՝

27 Սուրիասյան Ա., *Հոմանիշների բառարան*, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ հրատ.», 1967, էջ 661:

28 Աղայան Է., *Արդի հայերենի...*, էջ 1543:

29 Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. I, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ հրատ.», 1969, էջ 691:

30 Նույն տեղում, էջ 249:

31 Թումբ բառի առարկայական հարաբերության մեջ տեղաշարժ է եղել: Բառական նշանը՝ թումբ, դարձել է այլ առարկայի անուն: Փոփոխակ այս կրկնանվանումը վերաբերում է նախորդ համատեքստում օբյեկտիվ իրականության արդեն նշանակված առարկային՝ մազեր, որը վերանվանվել է: Սև թումբ անվանական բառակապակցության դենոտատիվ նշանակությունը հայտնի է դառնում համատեքստում այն առաջին կրկնանվանումն է, որն ըստ էության դառնում է նաև հիմնական ուղենշային մեկնակետը ստեղծագործության վերնագրի՝ «Ռեհան» բառի հետ զուգորդական հարաբերության մեջ դիտարկելու թեմատիկ զարգացման ողջ հեռանկարը:

32 Բառի նշանակության մեջ արտացոլվում և ամրագրվում է ոչ թե առարկան ամբողջությամբ, այլ դրա հատկանիշների կամ հատկությունների միայն ոչ մեծ քանակությունը, անգամ առարկային հատուկ բազմաթիվ հատկություններից մեկը: Բառով նշանակվող օբյեկտների էական հատկանիշների ամբողջականությունը անվանվում է բառի սիգնիֆիկատ (տե՛ս **Кобозева И. М., Лингвистическая семантика**, Москва, «Эдиториал УРСС», 2000, с. 81): Օբյեկտն անվանելու ընթացքում «սիգնիֆիկատը միջանկյալ օղակ է, որն ապահովում է անվան և արտալեզվական օբյեկտի համադրումը»: *Языковая номинация: Общие вопросы* (отв. ред. Б.А. Серебренникова), Москва, «Наука», с. 251.

ձյունսպիտակ ծոծրակին վրա բառակապակցության՝ *հո՛ղ, այդ բարձունքին վրա* փոփոխակ կրկնանվանումը, որում *բարձունք* (պարանոցի սլացիկությունը) և *թումբ* (մազերի ժողովված լինելը) բառերի փոխաբերական իմաստային բաղկացուցիչները ընկալելի են գեղարվեստական համատեքստի ամբողջականության մեջ: «Փոխաբերական անունից կարող են դուրս բերվել միայն այն հատկանիշները, որոնք համատեղվում են դենոտատի հետ»³³:

Կրկնանվանումների բաղադրիչների միջև իմաստաբանական տարաբնույթ կապերով պայմանավորված՝ օբյեկտի սկզբնական անվանման և կրկնանվանումների միջև իմաստաբանական համարժեքությունը տարբեր ծավալով է գոյանում: Ստեղծագործության «իմաստաբանական տեքստային դաշտերը»³⁴ ձևավորվում են նաև առանցքային այլ բառերի՝ *գլուխ, դեմք, երես* շուրջ: Հիմնաբառերի կրկնությունները, շղթայելով նովելի չորս հատվածները, կենտրոնացնում են պատումի իմաստային լիցքերը նաև այն առումով, որ դրանք գրեթե միշտ առանձնանում են տրամաբանական-իմաստային շեշտադրությամբ՝ ձևավորելով ստեղծագործության առանցքային թեման: Նովելի վերջին հատվածում՝ «*հիմա կ'օրհնենք քեզի, ի՛նչ ռեհանի պզգիկ փունջ*»// «*աղջկան մը դեմք առի՛ր պարբերի համար զիս*»...// «*Դուն իմ աչքիս՝ առաք զեղեցիկ մազերն ես միշտ անոր*» նախադասությունների համատեքստում ակնհայտ է *փունջ, դեմք, մազ* բառերի գույքորդական կապը նախորդ հատվածի սկզբում գործածված նաև *գլուխ* բառի հետ (Զոհիրալը նովելում առաջին անգամ *դեմք* և *մազ* բառերը գործածում է Ա, իսկ *գլուխ* բառը՝ Գ հատվածում): Ի դեպ, *գլուխ* բառում առկա է *մազ* բառի նշանակությունների մեկը՝ *գլխի մազերը*³⁵, իսկ *դեմք* բառն ունի նաև *մարդու գլխի աջակողմը, ճակատից մինչև կզակը և մինչև ականջները, երես*³⁶ նշանակությունը (նովելում գործածված է նաև *ծնոտ* բառը, որը *կզակ* բառի հոմանիշն է վերջինս, ինչպես նկատեցինք, տրված է Ս. Մալխասյանցի բառարանում *դեմք* բառամիավորի հետ իմաստային հարաբերությամբ) *գլուխ, դեմք, երես, ծնոտ*

33 Арутюнова Н. Д., Языковая метафора, Лингвистика и поэтика, Москва, «Наука», 1979, с. 160.

34 Новиков Л.А., Художественный текст и его анализ, Москва, «ЛКИ», 1988, с. 31.

35 Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1..., էջ 413:

36 Մալխասեանց Սո., Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երևան, «ՀՍՍՌ պետական հրատ.», 1944, էջ 509:

բառերը փոխկապակցված են մասի և ամբողջի համահարաբերակցությամբ:

Ռեհան և մագ բառերը նուվելի ընթացքում տարաձև կրկնություններով օղակում են տեքստը, ուղղորդում ընթերցողին՝ հասնելու իմաստի խորքային ընկալմանը: Ի վերջո, «գեղարվեստական տեքստերի վերնագրերը վերաիմաստավորվում են. դրանց և՛ ուղղակի, և՛ փոխաբերական նշանակությունը առարկայապես իրացվում է տեքստում»³⁷: Եվ պատահական չէ, որ բազմիցս փոփոխակվելով՝ կրկնանվանման շղթան «հանդես է գալիս որպես դիպաշարի հիմնականախբ, որոշակի օբյեկտին վերաբերող պատմության ուրվագիծ»³⁸: Ըստ Ս. Դ. Կացնելսոնի՝ «կան հասկացություններ, որոնք լեզվում ուղղակի նշանակում չունեն և արտահայտվում են նկարագրական եղանակով»³⁹, դրանք ունենում են նաև փոփոխակ տարբերակներ: Նկարագրական այդպիսի արտահայտությունները նույնպես կարող են գործածվել որպես կրկնանվանումներ: Այդպիսի կրկնանվանումները համատեքստի ներգործությամբ դրսևորում են տարբեր ծավալի իմաստաբանական համարժեքություն և ոճական կարևորություն օրինակ՝ հերոսուհու անշարժ, քարացած, բայց միևնույն ժամանակ ներքին լարվածության զգացողությունն ու հոգեվիճակը փոխանցող **զգուշավոր դիրք** բառակապակցությունն ու կրկնանվանումները կից և հեռու պարբերություններում՝ **անվերլուծելի ձգողություն, Կուռքի անպարբերություն, վեհերուրձև** փոփոխակ տարբերակները սկզբնականման հետ կապված են համատեքստային հոմանիշ հարաբերությամբ:

Գեղարվեստական տեքստը սեղմվում է, երբ կրկնանվանումն ուղղակիորեն արտահայտված չէ, բայց հասկացվում է համատեքստից, հաջորդիվ «վերականգնվում է» համարժեք հոմանշային տարբերակով, օրինակ՝ *Ամենեն հաճելի անակնկալը եղավ երբ ինձի դարձավ իր դեմքը գեղեցիկ ոչ հարկավ բայց տարօրինակ կերպով սրտի մոտ ու համակրելի պատկեր մը...*: Միայն նշվում է առարկայի հատկանիշը՝ **գեղեցիկ**, և ոչ առարկան՝ **դեմքը**: Անմիջապես հաջորդող պարբե-

37 Кухаренко В. А., *Интерпретация текста*, Москва, «Просвещение», 1988, с. 127.

38 Гак В. Г., *Языковые преобразования...*, с. 541.

39 Кацнельсон С. Д., *Общее и типологическое языкознание*, Ленинград, «Наука», 1986, с. 68.

րության մեջ գործածված է **դենք**-ի ևս մեկ՝ բովանդակային տարբեր ծավալով կրկնանվանում՝ *//...վասն զի ժպիտ մը գծագրվիլը ու աներ-նութանայր մեկ եղավ երեսին սաստիկ կարմրությանը մեջ՝ դենք-պարկեր-երես:* Կամ՝ «... ինքզինքս ուրիշ աշխարհ մը փոխադրված կը գգամ մաքուր ու խաղաղ երկիր մը, որ իզմե և իրմե զատ բնակիչ չունի ամբողջ տիեզերքը մեր երկուքիս ձգված»՝ **աշխարհ-երկիր-տիեզերք:** Սկզբնականման և կրկնականման բաղադրիչների հոմանշային հարաբերությունը ձևավորվում է նաև բաղադրիչներից մեկի քերականական ձևափոխությամբ, որով, օրինակ, ներկայացվում է միևնույն գործողության անշարժ վիճակի և ընթացքի հարաբերությունը՝ ...և անդադար կը դիտեր ծովը՝ հանդարտ, անձալք **սփռոցի մը պես պարզված...** /...ու հեռուն՝ ծովին մութ կապույտը սև **ծածկոցի մը պես կը տարածվի՝ սփռոց-ծածկոց, պարզվել-տարածվել:** Հոմանիշ բառերը դենոտատային նույնականություն են դրսևորում, այսինքն՝ անվանում են իրականության նույն առարկան, գործողությունը:

«Ռեհան»-ում հանդիպում են նաև դերանուններով կամ դերանվանական բաղադրիչ պարունակող կապակցություններով արտահայտված կրկնականումներ: Նովելում դրանք գործածված են ինչպես մոտ, այնպես էլ հեռու դիրքում՝ «Ինչեր չէին ըսեր ինծի **այդ մազերը, իրենց** անմռունչ կեցվածքը...- մտերմություն կը հաստատեի **անոնց** հետ.կը-ձանչնայի **զանոնք...**»//«**պարտեզին մեջ** տեղ տեղ դրված կազի լապտերներու լույսերուն տակ...»-որչափ որ կեցանք **այնտեղ...** - **այս Սյո-հյուրտարի պարտեզը...** - **հող** նստած էր.../Տարեց **մարդիկ** կային իր շուրջը, **հայրը, հորեղբայրները,** թերևս, ու **անոնց** առջև... //... **դեպի Քուշ-Տիլի իջնող զառիվերն** ու **հոն** վազող վտակին կը նայեր երեսը...// ...աչքս վեր, այդ **պատուհանին** սևեռած - մունջ կեցած է **հոն...** //...**փողոցին մեջ պատի մը տակ կեցած...** - Վաստակաբեկ, ժամերով **հոս** անքուն անցընելուս համար չեմ գանգատիր...»: Ցուցական նշանակության որոշ բառակապակցություններ, որոնց կազմում գործածվել են **այս, այդ** դերանունները, ձգքրտում, կոնկրետացնում են արդեն անվանված առարկան՝

«Ան ատեն ալ **առատ մազերը** կը սիրեի...// Ինչեր չէին ըսեր ինծի **այդ մազերը, իրենց** անմռունչ կեցվածքը հինգ, այդ բարձունքին վրա, պարկեշտ ու վրդովիչ բան մը ուներ...: **Այդ մազերը** բառակապակցությամբ ձգքրտվում, միաժամանակ որոշակիանում, հասկանալի է դառ-

նում նախադասության ներակա (ինպլիցիտ) բովանդակությունը (**Այդ մազերը ամեն ինչ ասում էին կամ շատ բան էին ասում**), իսկ անմիջապես հաջորդող **իրենց** անձնական դերանունը փոխարինում է նույն՝ **այդ մազերը** կապակցությամբ:

«...գեղեցիկ, ոչ հարկավ, բայց տարօրինակ կերպով **սրտին մոտ ու համակրելի պատկեր մը, հոգնած ու տրտմած նայվածքով**, որ ինկած տեղը կանգ առնելու պես բան մը ուներ կարծես: //...բայց ինձի այնպես թվեցավ, որ **այդ նայվածքը** մանրամասն հետախուզեց զիս...»: Առաջին նախադասության մեջ **որ**-ը հղում է նախորդող **հոգնած ու տրտմած նայվածքով...** բառակապակցությանը, հաջորդ պարբերության մեջ գործածված **այդ նայվածքը** բառակապակցությունը կոնկրետացնում է արդեն նշված առարկան՝ նկարագրական ողջ ծավալով, միաժամանակ արտահայտում է նաև գնահատողական վերաբերմունք:

«...մեծ ծառի մը **անքույթ հովանիին տակ փթթած ծաղիկ**՝ որ քամիի հարվածներուն դեմ պաշտպանված է անշուշտ, բայց ուզածին չափ արևին երեսը չի տեսներ...//*Կը զգամ, որ իմս վանդակներու ետին պահվրտող աղջիկ մըն է...* իր վեհերոտ ձևը **այս համոզումը** կուտա ինձի: Աղջկան բնութագրող այս կառույցներից վերջինում ճշգրտող ու ընդհանրացնող **այս համոզումը** բառակապակցությունը ընթերցողի ուշադրությունը հետահայաց կենտրոնացնում ու ամփոփում է այն իրավիճակն ամբողջությամբ, որը ներկայացված է նախորդող նախադասությունների **անքույթ հովանիին տակ փթթած ծաղիկ, վանդակներու ետին պահվրտող աղջիկ, իր վեհերոտ ձևը** կապակցություններում:

Զգացմունքի բեկումն ու պատումի անսպասելի շրջադարձը տեղի են ունենում այն պահին, երբ լուսաբացին հերոսը պատուհանի մոտ կանգնած տեսնում է ոչ թե աղջկան, այլ ռեհանի թաղարը՝ «...**ռեհանի պզտիկ թումբ մը, մութ կարմիր թաղարին վրա կեցած, առջվան զեփյուռեն կը սարսռա:**

Ա՜ն էր բաց պահուհանին առջև ինձի սպասողը մինչև լույս... նախադասությունը առանձնացվում է որպես պարբերության սկիզբ՝ այդ կերպ դերանվամբ ընդգծելով և կենտրոնացնելով հերոսի տանգնապալից սպասումների զգացմունքային լիցքերը: Նույն գործառույթն ունի նաև վերջին հատվածի սկզբում **ռեհանի պզտիկ փունջ** անվանական կապակցությանը փոխարինող **Դուն** դերանունը հաջորդ տողում:

Նովելում կան նաև երրորդ դեմքի դերանուններով արտահայտված կրկնանվանումներ, որոնք ոչ թե հաջորդում, այլև նախորդում են այն օբյեկտին, որին հղում են, Գ. Գալի բնորոշմամբ՝ «իմաստային աղբյուրին»: Նովելի սկզբում անձնավորված ներկայացված մագերի պատկերին (արդեն ենթադրվում է, որ դրանք պատկանում են ինչ-որ մեկին) հաջորդում են՝ «Ամենեն հաճոյալի անակնկալը եղավ երբ *ինծի դարձավ իր դեմքը...//Տարեց մարդիկ կային***իր** շուրջը...//բայց *զինքը* տոչորոդ հայտնի անհամբերությունը կը կարդայի երեսին վրա.....»: Գրողը դեռ չի բացահայտում, թե ով է այդ «ինքը»: Հաջորդիվ՝ «Պատանության անուրջներուն մեջ երագված, ըղձացված **էակն էր դեմս, խորհրդանշանը** իմ բոլոր փափագներուս»: Կից պարբերության մեջ դարձյալ գործածվում են դերանվանական կրկնանվանումներ (**ան, զինքը, իրեն իր, անկիա**): Համատեքստային առումով դերանունների փոխներգործության դերը շատ կարևոր է, այդպես է ձևավորվում նաև տեքստի ընդհանուր ռեֆերենտային կառույցը⁴⁰:

Ինչպես նշեցինք, որ որպես կրկնանվանումներ կարող են գործածվել ոչ միայն բառերը, բառակապակցությունները, այլև նախադասությունները: Ըստ Վ. Գալի՝ «տեքստում հաճախ տարբեր նախադասություններ ամբողջությամբ կամ մասնակիորեն մատնանշում են միևնույն իրադարձությունը»: Ըստ լեզվաբանի՝ այս դեպքում երկրորդ նախադասությունը կարելի է դիտարկել որպես իրադարձության կրկնանվանում <...>⁴¹: Դրանք նա բնորոշվում են իբրև «կրկնանվանում նախադասության մակարդակում»⁴²: Այդպիսի նախադասությունների հիմքում ընկած է դետոտատիվ միևնույն իրադրությունը, գործողությունը, վիճակը, հարաբերությունը⁴³: Նովելում, օրինակ, հերոսի հիացական

40 Устин А. К., Функциональные типы взаимодействия местоимений в тексте, Синтаксис предложения и текста, Пятигорск, Гос. пед. инст. иностр. языков, 1989, с. 86–87.

41 Гак В. Г., Языковые преобразования..., с. 547.

42 Там же, с. 545.

43 Շարահյուսական արտահայտությունների դենոտատները ոչ թե առանձին առարկաներն են, որակները, հատկությունները, հարաբերությունները, գործընթացներն ինքնին, այլ իրականության մեջ ներկայացվող իրադրությունները և հարաբերությունների՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող համակարգերը կամ դրանց՝ մտովի կառուցվող համանմանությունները (տես **Сүсов И. П.**, Глубинные аспекты семантики предложения, Проблемы семантики, Москва, «Наука», 1974, с. 59–60): Շարահյուսական կառույցի

հոգեվիճակն են արտահայտում նախադասությունների հետևյալ բաղադրիչ միավորները՝ «...քովընտի նստած՝ **կը դիտեի ձյունասափտակ ծոծրակին վրա ժողված սև թումբը <...> -որուն աչքերս հառած կը մնային: // Հեռվեն՝ նայվածքս կը հեղուկանա անոնց շնորհալի շրջանագիծին ...**»: Նախադասություններում ներկայացված է դենոտատիվ նույն իրադրությունը: Հերոսուհու հոգեվիճակը՝ անհանգիստ ու սպասումնալից զգացողությունը երիտասարդի հանդեպ, ներկայացվում է հետևյալ կառույցներով՝ «... բայց զինքը տոչորոդ հայտնի անհամբերությունը կը կարդայի երեսին վրա, ամեն անգամ, որ **առիթը գտներ իմ կողմն նայելու**.../...կը զգայի ստույգ կերպով որ **անուշադիր չէր ինձի**.../...մութին մեջ տեսա իր նազելի գլուխը՝ որ **երին կը դառնար մեկը փնտրելու համար կարծես**»: Կամ՝ «**թեթև քամին մեղմիվ կշոյե մազերդ...// հովը կը գգվե զանոնք...**»: Սեղմվել է պատկերային ծավալը, խտացել խոսքի զգացմունքայնությունը՝ **թեթև քամին - հովը, մեղմիվ կշոյե - կը գգվե**, իսկ փոխարինող **զանոնք** դերանունով անձնավորվել է առարկան՝ մազերը:

Ամփոփելով ասվածը՝ հավելենք, որ «Ռեհան»-ում կրկնանվանումները տեղաբաշխված են՝

ա. նույն հատվածի նույն պարբերությունում (նաև նույն նախադասության մեջ)

բ. նույն հատվածի հաջորդող կամ միմյանցից հեռու գտնվող պարբերություններում

գ. տարբեր հատվածների տարբեր պարբերություններում:

Ջոհրապի նովելում օբյեկտիվ իրականության երկու առարկաների՝ մազ և ռեհան բառանուններում սկզբնապես (դեռևս վերնագրին ծանո-

իմաստաբանությունը համապատասխան լեզվական կառույցի կապն է նշանակվող դենոտատիվ իրադրության հետ (տե՛ս **Алефиренко Н. Ф.**, *Спорные проблемы семантики*, Москва, «Гнозис», 2005, с. 244): Իմաստաբանությունը, հենվելով նշանագիտության վրա, բացի հաղորդակցականից, առանձնացնում է նաև նախադասության անվանողական գործառնությունը: Նախադասության անվանողական դերը յուրահատուկ է. դրա «դենոտատը ոչ թե առարկան է, այլ ամբողջական իրադրությունը, փաստը: Այս տեսանկյունից նախադասությունը <...> անմիջականորեն իրադրությանը հարաբերակցվող ամբողջական նշան է, <...>» (տե՛ս **Москальская О. И.**, *Проблемы системного описания синтаксиса*, Москва, «Высшая школа», 1974, с. 9-10): Նախադասության անվանողական գործառնության մասին տե՛ս նաև **Арутюнова Н. Д.**, О номинативном аспекте предложения, *Вопросы языкознания*, 6, 1971, 6, с. 63-73.

թանալիս, այնուհետև նովելի անմիջապես առաջին նախադասության մեջ) ակտիվանում են նախ մշակութաբանական դիսկուրսի տարրերը, որոնք օգնում են տեքստն ընթերցելու ընթացքում կրկնանվանումների շղթաների բաղադրիչներում հայտնաբերելու և առանձնացնելու տարրեր բառերի միջև առկա իմաստային զուգորդական կապերը: Միևնույն օրյեկտի, երևույթի, իրադրության տարրեր անվանումները գործածված են նովելի տարրեր հատվածներում: Վերնագիրը տեքստում կրկնվում է ինչպես ուղղակիորեն, այնպես էլ հիմք է դառնում փոփոխակ կրկնանվանումների: Պատումի ողջ ընթացքում միևնույն առարկան կամ անձը, երևույթը, իրադրությունը տարանվանվում է լեզվական տարրեր միավորներով: Կրկնանվանումների շղթաներ ձևավորվում են հոմանշային բառերով կամ փոխաբերական բառակապակցություններով, նախադասություններով, երրորդ դեմքի անձնական դերանունների քերականական ձևափոխություններով, ցուցական դերանուններով: Կրկնանվանումները սեղմում են տեքստի տարածությունը, մտքի անսպասելի անցումների հնարավորությամբ խոսքին հաղորդում զգացմունքային լարվածություն, ինչը բնորոշ է փոքր արձակի ժանրին՝ նովելին:

THE TEXT-FORMING FUNCTION OF COREFERENCE IN THE NOVELLA “REHAN” BY GRIGOR ZOHRAP

KARINE ASATRYAN

PhD in Philology

Quantum College

Abstract

Text formation is one of the most important functions of a language. Coherence and structural integrity are key features of a text. Coreferences play an essential role in the integration of different text units. Coreference is the nomination of the same object or subject previously designated in the text with the help of different linguistic means. Coreference takes part in linking text units as well as forming qualitatively new structural, semantic and communicative units of the text as a coherent discourse. In terms of semantics and syntax, coreferences perform their linking function in different positions, being used either side by side or separately. The article observes the text-forming function of coreference in the novella “Rehan” by Grigor Zohrap.

Keywords: Rehan, coreference, coherence, text-forming function, coreference chain

ТЕКСТООБРАЗУЮЩАЯ РОЛЬ ПОВТОРНЫХ НОМИНАЦИЙ В НОВЕЛЛЕ ГРИГОРА ЗОГРАБА «РЕХАН»

КАРИНЕ АСАТРЯН

канд. филологич. наук

Гимназия «Квант»

Резюме

Структурирование текста является одной из важнейших функций языка. Связность и структурная цельность текста являются одними из наиболее важных признаков текста. В объединении разных текстовых единиц важную роль играет повторная номинация.

Повторная номинация — это называние уже ранее обозначенного в тексте субъекта или объекта различными языковыми средствами. Повторные номинации участвуют в соединении текстовых единиц, формировании качественно новой структурной, смысловой и коммуникативной единицы текста как связной речи. С семантической и синтаксической точки зрения повторные номинации в тексте выполняют свою соединительную функцию в разных позициях: сопряженно или дистантно. В статье мы рассмотрели текстообразующую роль повторных номинаций в новелле Григора Зограба «Рехан».

Ключевые слова: Рехан, повторная номинация, текстообразующую роль, ряд повторных номинаций

Գրականության ցանկ

1. **Арутюнова Н. Д.**, *Языковая метафора, Лингвистика и поэтика*, Москва, «Наука», 1979.
2. **Барт Р.**, Лингвистика текста, *Новое в зарубежной лингвистике*, вып. VIII, 1978, с. 422–449.
3. **Бахтин М. М.**, *Эстетика словесного творчества*, Москва, «Искусство», 1986.
4. **Гак В. Г.**, *Языковые преобразования*, Москва, «Языки русской культуры», 1998.
5. **Джанджакова Е. В.**, *О поэтике заглавий. Лингвистика и поэтика*, Москва, «Наука», 1979, с. 207–214.
6. **Каменская О. Л.**, *Текст и коммуникация*, Москва, «Искусство», 1990.
7. **Кацнельсон С. Д.**, *Общее и типологическое языкознание*, Ленинград, «Наука», 1986.
8. **Кухаренко В. А.**, *Интерпретация текста*, Москва, «Просвещение», 1988.
9. **Лотман Ю.М.**, *Внутри мыслящих лиров. Человек – текст – селиосфера – история*, Москва, «Языки русской культуры», 1996.
10. **Москальская О. И.**, *Грамматика текста*, Москва, «Высшая школа», 1981.
11. **Новиков Л.А.**, *Художественный текст и его анализ*, Москва, ЛКИ, 1988.
12. **Падучева Е. М.**, О структуре абзаца, *Труды по знаковым системам*, II, Тарту, 1965.
13. **Палек В.**, Кросс-референция: К вопросу о гиперсинтаксисе, *Новое в зарубежной лингвистике*, вып. VIII, 1978, с. 243–258.
14. **Пушкарёва, И. А.**, О месте заглавия в текстовой парадигматике (На материале лирики Б. А. Ахмадулиной), *Вестник ТГПИУ*, вып., 3 (47), 2005, с. 28–33.
15. **Тамарченко Н.Д.**, *Поэтика: словарь актуальных терминов и понятий*, Москва, Изд. Кулагиной; Intrada, 2008.
16. **Устин А. К.**, *Функциональные типы взаимодействия*

- местоимений в тексте, Синтаксис предложения и текста*,
Пятигорск, гос. пед, ин. иностр. языков, 1989.
17. *Языковая номинация. Общие вопросы*, Москва, «Наука», 1977.
 18. *Языковая номинация., Виды наименований*, Москва, «Наука», 1977.
 19. **Daneš F.**, Functional Sentence Perspective and the Organization of the Text, *Papers on functional sentence perspective (Janua Linguarum. Series Minor)*, vol., 147, p. 114.
 20. **Firbas J.**, On the Concept of Communicative Dynamism in the Theory of Functional Sentence Perspective, *Sbornik prac Filosofické fakulty brnenské university, Řada jazykovědná*, vol. 20, iss. A19, 1971, p. 135–144.
 21. **Halliday M.A.K., Hasan R.**, *Cohesion in English*, London–New York, Longman Group Ltd, 1976.

Ընդունված է՝ 02.11.2023

Գրախոսվել է՝ 20.11.2023

Հանձնված է տպ.՝ 12.03.2024